# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» մայիսի 2026թ. N ՄՊ/307-Ա

ք. Արմավիր

### «ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2026 թվականի մայիսի 20–ի ՄՊ/298-2026 որոշումը, «Նոր Արտագերսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

**որոշում եմ՝**

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին (Ն. Ալավերդյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Նոր Արտագերսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Սոնիկ Արթենյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովի նախագահին (Ն. Ալավերդյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը աշխատանքներն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,**

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ** Подписано: GRIGORYAN ARAM 2509720082 **ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի տեղակալ,
մարզպետին փոխարինող՝

2026 թվականի Տարիք 25-ի
N ՄՈ/307 -Ա որոշման

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

**Հանձնաժողովի նախագահ՝**

Ն.Ալավերդյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ

**Անդամներ՝**

Ն. Երվանդյան
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ

Ջ. Եղոյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

**Հանձնող՝**
Հ. Ավետիսյան
«Նոր Արտագերսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության նախկին տնօրենի պարտականությունները կատարող

**Ընդունող՝**
Ն. Իվանյան
«Նոր Արտագերսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ